

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից
2019 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ**

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2019 թվականի առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 34 որոշումներ և 60 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 87 հրամաններ:

2019 թվականի հուլիսի 01-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 3007 և ելք են արվել 3365 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

Մարզպետարանի աշխատակազմում 2019թ հուլիսի 01-ի դրությամբ թափուր են մարզպետարանի՝ 1 վարչական, 3 քաղաքացիական ծառայողների պաշտոնների հաստիքներ:

Սահմանված կարգով, փարբեր ծրագրերով ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից իրականացվել են քաղաքացիական ծառայողների վերապատրաստման աշխատանքները, ըստ որի մասնագիտական վերապատրաստում անցան թվով 10 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի ստորաբաժանումները մեծ ուշադրություն ենջ դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, ուսումնասիրմանը և լուծմանը: 2019թ հունվարի 11-ի թիվ 1 որոշմամբ մարզպետի և ազգաբնակչության անմիջական կապը ամրապնդելու նպատակով ամենամսյա ընդունելությունները իրականացվում են համայնքներում, իսկ բարձրացված խնդիրները ուսումնասիրվում են տեղում: 2019 թվականի հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի մոտ կատարվել է 535 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ՀՀ Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 30 դիմումներ, որից՝ 5-ը ստացվել են Ջերմուկի, 10-ը Վայքի, 15-ը Եղեգնաձորի փարածաշրջանից: 2019 թվականի առաջին կիսամյակում 302 քաղաքացու դրամական օգնություն է փրամադրվել, 7 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 17-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատնքային, համայնքների խնդիրներին լուծում փալու հարցերը:

2019 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 535 քաղաքացիներ, որից՝

| | |
|---|-----|
| 1. Դրամական օգնություն | 335 |
| 2. Նպաստի հարցերով | 19 |
| 3. Հողային վեճեր և սահմանների ճշտում | 18 |
| 4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով | 26 |
| 5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության | 25 |
| 6. Աշխատանքի տեղավորման | 3 |
| 7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր | 3 |
| 8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու | 7 |
| 9. Պետ.պատվերով բուժօգնություն | 17 |
| 10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով | 2 |
| 11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով | 12 |
| 12. Այլ հարցերով | 68 |

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան

01.07.2019